ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2015 թվականի N 39-Ա

<<ԽՆՁՈՐԵՍԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N41- Ա որոշման 1-ին կետի, ***որոշում եմ***՝

1. <<Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 412,800 Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 369,800 Հայաստանի Հանրապետության դրամով՝ հասարակ (սովորական) բաժնետոմսի քանակի պակասեցմամբ: Արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը կկազմի 43,000 << դրամ, որը կազմում է 10 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4300 Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի հունիսի 7-ի <<Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին>> N119-Ա որոշմամբ հաստատված <<Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության

կանոնադրության 4.2. կետի 1-ին պարբերությունը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել <<Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2015թ. մարտի 25
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2015թվականի
մարտի 25-ի թիվ. 39- Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Կազմված է 25.03.2015թ. բաղկացած է 1 թերթից
ՕՐԻՆԱԿ - -
ԳՐԱՆՑՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 05.11.2007թ..
Գրանցման թիվ- 222.120.00765
Վկայական 03 Ա 076975
ՀՎՀՀ 09211625
05.11.2007թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
« » ---------- 2015թ

«ԽՆՁՈՐԵՍԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ »
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

1. «Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 43000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 10 հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4300 դրամ:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է « Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 05.11.2007թ գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը: